



*Կալիֆորնիայի հաշմանդամների պահպանության և իրավունքների  
պաշտպանության համակարգ  
Անվճար հեռախոսահամար՝ (800) 776-5746*

## Օժանդակ սարքերի և տեխնիկայի ստացում Medi-Cal-ի միջոցով

---

*Փետրվար 2016թ., Հր. #5583.10*

### 1. Ի՞նչ է Medi-Cal-ը:

Medi-Cal-ը նահանգային և դաշնային ծրագիր է, որն ապահովում է ցածր եկամուտ ունեցող բազմաթիվ անձանց բժշկական ապահովագրական ծածկույթը: Կալիֆորնիայում Medi-Cal-ի գլխավոր նահանգային գործակալությունը Առողջապահական ծառայությունների վարչությունն է (Department of Health Care Services)՝ [www.dhcs.ca.gov](http://www.dhcs.ca.gov):

Medi-Cal-ը դաշնային “Medicaid” ծրագրի կալիֆորնիական տարբերակն է: Medicaid ծրագիրը համակարգող դաշնային վարչությունը Առողջապահության և սոցալ ծառայությունների նախարարությունն է (Department of Health and Human Services), Medicare և Medicaid ծառայությունների կենտրոնները (CMS)՝ <http://www.cms.gov>:

SSI ստացող անձանց համար Medi-Cal ծրագրի համապատասխանությունը հաստատվում է ավտոմատ կերպով: Մնացած բոլորի համար Medi-Cal ծրագրի համապատասխանությունը որոշվում է տարածքային սոցիալական ապահովության ծառայությունների վարչության կողմից: Medi-Cal-ի ծառայությունները մատուցվում են Medi-Cal-ի Կառավարվող բուժօգնության ծրագրերի (Managed Care Health Plans - MCP)-ի կամ անկախ բուժապասարկողների կողմից վճարովի հիմունքներով:

## **2. Ի՞նչ է օժանդակ սարքը և տեխնիկան:**

Օժանդակ սարքերի տակ ընդհանուր առմամբ հասկացվում է ցանկացած սարք, ծրագրային ապահովում կամ արտադրական համակարգ, որն օգտագործվում է հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական կարողությունները մեծացնելու, պահպանելու կամ բարելավելու համար: Այս սահմանումը ներառում է ինչպես Երկարատև օգտագործման բժշկական սարքերը (Durable Medical Equipment - DME), այնպես էլ՝ Օրթոպեդիկ և պրոթեզային սարքերը (Orthotic and Prosthetic Devices - OAP), որոնք առաջարկվում են Medi-Cal ծրագրի շրջանակում:

Medi-Cal ծրագրով առաջարկվող **Երկարատև օգտագործման բժշկական սարքերը (DME)** ներառում են այնպիսի սարքեր, ինչպիսիք են հիմնական և անհատականացված անվասայլակները, ձեռնափայտերը, անթացուպերը, քայլակները, բռնաձողերը, հիվանդանոցային մահճակալները, ջրային կամ յուղային փչովի ներքնակները, թթվածնային բուժման սարքերը, հաղորդակցմանը նպաստող սարքեր և այլ սարքեր: 22 C.C.R. §51521: Medi-Cal-ը տրամադրում է նաև DME սարքեր հաշմանդամ ծնողներին, խորթ ծնողներին, հոգեծնողին կամ օրինական խնամակալին՝ հոգալու երեխայի համար: Սոց. ապահովության օրենքի §14132(m):

Medi-Cal ծրագրով տրամադրվող **Օրթոպեդիկ պրոթեզային սարքերը (OAP)** ներառում են մարմնի գործառույթները վերականգնող կամ մարմնի մասերը փոխարինող սարքերը:

### 3. Ո՞ր DME և OAP սարքերն են մտնում Medi-Cal-ի ծածկույթի մեջ:

**Երկարատև օգտագործման բժշկական սարքեր.** Medi-Cal-ի ծածկույթի մեջ մտնում են DME սարքերը, եթե դրանք բավարարում են Ձեր բժշկական սարքերի կարիքները և նշանակված են լիցենզավորված բժիշկ-թերապևտի կողմից: Դրանք պետք է լինեն բժշկական տեսանկյունից անհրաժեշտ և համապատասխանեն հետևյալ չափանիշներին.

- a. ծառայեն որևէ բժշկական նպատակի,
- b. դիմակայեն շարունակական օգտագործմանը,
- c. օգտակար լինեն Ձեզ որևէ հիվանդության, վնասվածքի, ֆիզիկական անկարողության կամ բնածին արատի համար,
- d. օգտակար չլինեն որևէ մեկին, ով չունի հիվանդություն, վնասվածք, ֆիզիկական անկարողություն կամ բնածին արատ, և
- e. լինեն օգտագործման համար պիտանի ինչպես տանը, այնպես էլ տանից դուրս: 22 C.C.R. § 51160:

**Օրթոպեդիկ և պրոթեզային սարքեր.** Medi-Cal-ի ծածկույթի մեջ մտնում են OAP սարքերը, եթե դրանք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են և նշանակված են լիցենզավորված բժշկի, օրթոպեդ-վնասվածքաբանի կամ ատամնաբույժի կողմից: Ստորին վերջույթների պրոթեզները պետք է նշանակված լինեն լիցենզավորված բժշկի կողմից:

Medi-Cal ծրագրով DME սարքերը պետք է ծառայեն որևէ բժշկական նպատակի: Բժշկական նպատակ նշանակում է, որ սարքը Ձեզ անհրաժեշտ է Ձեր հաշմանդամության համար, և Դուք չէիք ունենա դրա կարիքը, եթե հաշմանդամ չլինեիք: Սա ներառում է շատ ավելին, քան պարզապես այցելություն բժշկին բուժօգնություն ստանալու համար: Եթե Ձեզ անհրաժեշտ է սարք, որը Ձեզ կօգնի քայլել, խոսել կամ կատարել առօրյա կյանքին առնչվող այլ գործողություններ, ուրեմն Դուք ունեք սարքի անհրաժեշտություն բժշկական

տեսանկյունից և հետևաբար այն կմտնի Medi-Cal ծածկույթի մեջ ըստ Medi-Cal-ի բժշկական անհրաժեշտության չափանիշի: DME սարքերի բժշկական անհրաժեշտությունը ներկայացնելու համար անհրաժեշտ է ամենակարևորը ցույց տալ, որ նպատակային սարքը Ձեր հաշմանդամության խնդրի ամենաողջամիտ լուծումն է:

#### **4. Medi-Cal-ը ի՞նչն է համարում բժշկական տեսանկյունից անհրաժեշտ:**

Նահանգային օրենքները բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են սահմանում այն ծառայությունները, դեղամիջոցները, պարագաները և սարքերը, որոնք "հիմնավորված են և անհրաժեշտ են կյանքը պաշտպանելու, ծանր հիվանդությունը կամ ծանր կարգի հաշմանդամությունը կանխարգելելու կամ սուր ցավը մեղմելու համար": (Սոց. ապահովության օրենքի §§14059.5, 14133.3): Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայություններն են վերականգնողական և այլ ծառայությունները, որոնք անհրաժեշտ են նորմալ ապրելակերպի կարողությունները, անկախ ինքնուրույն խնամքն ապահովելու կամ պահպանելու համար:

Բացի այս ընդհանուր չափանիշից Medi-Cal-ն ունի բժշկական անհրաժեշտության հատուկ չափանիշներ 21 տարեկանից ցածր, տարբեր բուժհաստատություններում գտնվող անձանց և ինչպես Medicare-ին, այնպես էլ Medi-Cal-ին համապատասխանող անձանց համար: Այս հատուկ չափանիշները կարող են օգտագործվել, եթե տվյալ սարքը կամ ծառայությունը չեն համապատասխանում բժշկական անհրաժեշտության ընդհանուր չափանիշին: Օրինակ 21 տարեկանից ցածր անձինք իրավունք ունեն ստանալ անհրաժեշտ բուժօգնություն՝ "թերությունները և ֆիզիկական և մտավոր հիվանդություններն ու առողջական խնդիրները շտկելու կամ բարելավելու համար ..." Այս հատուկ չափանիշը դաշնային օրենքի պահանջ է Վաղ և պարբերական հետազոտում, աշխտորոշում և բուժում (Early and Periodic Screening, Diagnosis and Treatment - EPSDT) ծրագրի շրջանակում: EPSDT ծրագրի և Կալիֆորնիայի Երեխաներին

մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն կարելի է գտնել

<http://www.disabilityrightsca.org/pubs/PublicationsChildrensHealth.htm>

կայքէջում:

Եթե Դուք ունեք DME կամ OAP սարքերի համար ապահովագրական ծածկույթ ստանալու հետ կապված խնդիրներ, որովհետև Medi-Cal-ն ասում է, որ դրանք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ չեն, խնդրում ենք զանգահարել Կալիֆորնիայի հաշմանդամների իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպություն:

### **5. Կալիֆորնիան ունի՞ DME և OAP սարքերի բացառիկ ցանկ, որոնք մտնում են ապահովագրական ծածկույթի մեջ:**

Ոչ: Կալիֆորնիան ունի նախահաստատված DME և O&P սարքերի ցուցակ, որը սակայն բացառիկ չէ: Դաշնային օրենքով Ձեզ պետք է տրվի "իմաստալից հնարավորություն՝ սարքերի նախահաստատված ցուցակի փոփոխություններ կամ բացառություններ գտնելու համար": Դաշնայի չափանիշը քննարկվել է նահանգային Medicaid ծրագրի տնօրենի 1998թ. սեպտեմբերի 4-ի նամակում, որը կարելի է գտնել Medicare և Medicaid ծառայությունների դաշնային կենտրոնի (CMS) կայքէջում

<https://downloads.cms.gov/cmsover/archived-downloads/SMDL/downloads/SMD090498.pdf> հասցեում:

### **6. Կարո՞ղ եմ ստանալ DME կամ O&P սարքեր առանց Medi-Cal-ի կամ իմ կառավարվող բուժօգնության ծրագրի նախնական թույլտվության:**

Նախահաստատված ցուցակի հետևյալ սարքերի համար նախնական թույլտվություն անհրաժեշտ չէ.

1. Պրոթեզային սարքեր կամ ծառայություններ, որոնց արժեքը 500 ԱՄՆ դոլարից պակաս է: 22 C.C.R. §51315(a)(2):
2. Օրթոպեդիկ սարքեր կամ դրանց նորոգում, եթե արժեքը 250 ԱՄՆ դոլարից պակաս է: Սոց. ապահովության օրենքի § 14132.765, 22 C.C.R. §51315(a)(1):

3. DME սարքեր, եթե արժեքը պակաս է 100 ԱՄՆ դոլարից, 22 C.C.R. §51321 (b)(1), և
4. DME սարքերի վերանորոգում և սպասարկում, եթե արժեքը չի գերազանցում 250 ԱՄՆ դոլարը օրացուցային ամսվա ընթացքում: 22 C.C.R. §51321(b)(2)

## **7. Ի՞նչպես կարող եմ ստանալ նախնական թույլտվություն DME կամ O&P սարքերի համար Medi-Cal ծրագրի շրջանակում:**

Ձեր DME կամ OAP սարքերի մատակարարը պետք է լրացնի Բուժման թույլտվության դիմում (Treatment Authorization Request - TAR) և ներկայացնի այն Medi-Cal-ի տարածքային գրասենյակ կամ Ձեր կառավարվող բուժօգնության ծրագրին, եթե Դուք գրանցված եք դրանցից որևէ մեկում: TAR դիմումը պետք է ներկայացնել տվյալ ծառայության համար Ձեր կարիքը հաստատող փաստաթղթերի հետ միասին՝ ներառյալ որևէ բուժսպասարկողի բժշկական հիմնավորման (բժշկական անհրաժեշտության) մասին նամակը: Մանրամասն տեղեկատվության համար տե՛ս Medi-Cal TAR-երի վերաբերյալ մեր հրապարակումը:

## **8. Որո՞նք են Medi-Cal-ի կողմից DME սարքերի և բժշկական պարագաների նկատմամբ կիրառվող որոշ սահմանափակումները:**

Medi-Cal-ի թույլտվությունը սահմանափակվում է ամենացածր արժեքով DME սարքերով, որոնք ադեկվատ կերպով կծառայեն Ձեր բժշկական կարիքների բավարարմանը: Բաժին 22 C.C.R. §51321(g):

Medi-Cal-ի ծածկույթի մեջ չեն մտնում կենցաղային իրեր, առաջնային բժշկական կիրառություն չունեցող ապրանքներ և հագուստ, եթե անգամ դրանք բավարարում են օրենքով սահմանված բժշկական կարիքը: Եթե կենցաղային իրը ծառայի Ձեր բժշկական կարիքներին, Medi-Cal-ը չի տա բժշկական սարքի թույլտվություն: Medi-Cal-ի ծածկույթի մեջ չեն մտնում օդորակիչ սարքերը, օդի զտիչները, սննդի խառնիչները, օրթոպեդիկ ներքնակները կամ ավտոմեքենայի մոդիֆիկացիաները: 22 CCR § 51321(e) և 51321(f):

## **9. Ե՞րբ կարող է Medi-Cal-ը տրամադրել թեթևաքաշ, անհատականացված կամ էլեկտրական անվասայլակ:**

Medi-Cal-ը կզնի թեթևաքաշ, անհատականացված կամ էլեկտրական անվասայլակ միայն այն դեպքում, եթե կարողանաք հիմնավորել դա: Սկզբունքորեն Medi-Cal-ը կզնի թեթևաքաշ կամ խիստ թեթևաքաշ սայլակներ միայն այն դեպքում, եթե Ձեր թները չունենան ավելի ծանրաքաշ սայլակներն ինքնուրույն շարժելու ուժ: Սպորտային անվասայլակները չեն դիտվում որպես Medi-Cal-ից տրամադրվող նպաստ: Medi-Cal-ը կարող է հաստատել էլեկտրական անվասայլակի տրամադրումը, եթե Ձեր թները վերին հատվածում չշարժվեն կամ ուժ չունենան ձեռքով քշվող անվասայլակն աշխատեցնելու համար: Էլեկտրական անվասայլակի դեպքում, եթե այն խնդրում էք միայն սոցիալական, կրթական կամ աշխատանքային կարիքները հոգալու համար, Medi-Cal-ը կմերժի Ձեր դիմումը: All-Plan Letter (APL) # 15-018, Medi-Cal ծրագրի քաղաքականություն 82-21: Տե՛ս նաև APL 15-018 <http://www.dhcs.ca.gov/formsandpubs/Documents/MMCDAPLsandPolicyLetters/APL2015/APL15-018.pdf> հղումով:

## **10. Medi-Cal-ը կվճարի՞ իմ տան վերափոխումների համար:**

Միայն որոշ դեպքերում: Medi-Cal-ը կանոնավոր Medi-Cal ծրագրի միջոցով չի վճարի տան վերափոխումների համար բացառությամբ այն դեպքերի, եթե դա անհրաժեշտ է տանը դիալիզային ծառայություններ մատուցելու համար: 22 CCR § 51321(a): Եթե Դուք ներառված եք Medi-Cal-ի կառավարվող բուժօգնության ծրագրում, ծրագիրը կարող է փակել այդ ծախսերը, սակայն դա չի պահանջվում: Այնուամենայնիվ, Medi-Cal-ի ծածկույթը կներառի տան վերափոխումները, եթե Դուք ստանում եք Medi-Cal Տնային և համայնքային ծառայություններից (HCBS) հրաժարվելու արդյունքում: HCBS հրաժարականների մասին տեղեկատվություն կարելի է գտնել DRC-ի կայքէջում <http://www.disabilityrightsca.org/pubs/PublicationsChildrensHealth.htm> և <http://www.disabilityrightsca.org/pubs/PublicationsRULAEnglish.htm> հղումներով:

**11. Medi-Cal-ը կվճարի՞ իմ առօրյա ապրելակերպի գործողություններն ապահովող ինքնուրույն օգնության օժանդակ պարագաների համար:**

Այո: Medi-Cal-ը կվճարի ինքնուրույն օգնության օժանդակ պարագաների համար, որոնք ապահովում են առօրյա ապրելակերպի սովորական գործողությունների կատարումը: Այդպիսի օժանդակ պարագաներ են հատուկ նշանակության սպասքի պարագաները, սպասքի բռնիչները, կոճակներ կոճկելու հարմարանքները, զուգարանակոնքը բարձրացնող սարքերը, ճկուն ցնցուղային խողովակները, կանգնելու սեղանները և այլ պարագաներ: Քանի որ Medi-Cal-ը չի համարում դրանք DME սարքեր, դրանց բոլորի համար ահրաժեշտ է նախնական թույլտվություն անկախ արժեքից: Medi-Cal ծրագրի քաղաքականություն 49-73 & 73-11:

**12. Medi-Cal-ը կվճարի՞ ձայնարձակող և հաղորդակցման լավացմանը նպաստող սինթեզավորված սարքերի (նախկինում հայտնի են որպես լրացուցիչ/այլընտրանքային հաղորդակցման (AAC) սարքեր) համար:**

Այո: Medi-Cal-ը կտրամադրի լրացուցիչ/այլընտրանքային հաղորդակցման սարքեր, եթե սահմանվի, որ դրանք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են: Տե՛ս Medi-Cal-ի Երկարատև օգտագործման բժշկական սարքերի և բժշկական պարագաների ձեռնարկի Ձայնարձակող սարքերի բաժինը [http://files.medi-cal.ca.gov/pubsdoco/publications/masters-mtp/part2/spedev\\_a02a04a06a08o01o03o11.doc](http://files.medi-cal.ca.gov/pubsdoco/publications/masters-mtp/part2/spedev_a02a04a06a08o01o03o11.doc) հասցեում: Այս հնարավորությունը նախատեսված է Medi-Cal-ի շահառուների համար, ում մոտ ախտորոշվել է հաղորդակցման լուրջ խանգարում:

**13. Որքա՞ն հաճախ կարող եմ փոխարինել իմ DME սարքը:**

Medi-Cal-ն ունի հաճախականությունների ցուցակ, որը սահմանափակումներ է դնում DME սարքերի փոխանակման վրա, սակայն Հաճախականությունների ցուցակը չի հանդիսանում ծանր ու



անհապաղ պահանջ: Օրինակ նահանգային օրենքով Medi-Cal-ը "չպետք է թույլ տա երկարատև օգտագործման բժշկական սարքերի և բժշկական պարագաների փոխանակումը, եթե դրա անհրաժեշտությունն առաջացել է շահառուի հսկողությունից դուրս հանգամանքների արդյունքում սարքի կորստի կամ փչացման հետևանքով": (Մոց. ապահովության օրենքի §§ 14132(k) and (m)):

Դաշնային օրենքը թույլ է տալիս, որ Medi-Cal-ն ունենա հաճախականությունների ցուցակներ, ելնելով վարչական հարմարավետությունից, սակայն այն պետք է թույլ տա բացառություններ՝ "հավաստիացնելու, որ ծածկույթի քանակը, տևողությունը և ծավալը հիմնավորված կերպով բավարար են ծառայության նպատակն իրականացնելու համար": 42 C.F.R. § 440.230(b): Մրա համար հիմնական լավագույն աղբյուրը նահանգային Medicaid ծրագրի տնօրենի 1998թ. սեպտեմբերի 4-ի նամակն է, որը հասանելի է այստեղ՝ <https://downloads.cms.gov/cmsgov/archived-downloads/SMDL/downloads/SMD090498.pdf>:

#### **14. Ինչպե՞ս եմ ես ստանալու DME սարք, եթե ես ունեմ ն՝ Medicare, և՛ Medi-Cal:**

*Չարպենթիերն ընդդեմ Կիզերի* գործով դատական ակտը սահմանել է այն ընթացակարգերը, որոնցով կարելի է ստանալ Medi-Cal-ի թույլտվություն նախքան Medicare-ին հաշվի ներկայացումը: Այդպես DME սարքի մատակարարը Medicare-ին հաշիվ ներկայացնելիս կարող է համոզված լինել, որ կստանա ամբողջական վճարումը Medi-Cal-ի սակագնով, որը սովորաբար ավելի բարձր է, քան Medicare-ի սակագինը: Ըստ Չարպենթիերի ընթացակարգի.

1. DME սարքի մատակարարը նախ ներկայացնում է TAR դիմում Medi-Cal-ին:
2. Երբ Medi-Cal-ը հաստատում է TAR դիմումը, DME սարքի մատակարարը տրամադրում է սարքը և ծախսի համար հաշիվը ներկայացնում է Medicare-ին:
3. Եթե Medicare-ը որոշում է, որ սարքը բժշկական անհրաժեշտություն է, ապա Medicare-ը վճարում է այն արժեքի

80%-ը, որը համարում է որպես ողջամիտ գին: Այնուհետև Medi-Cal-ը վճարում է Medi-Cal-ի սակագնի և Medicare-ի վճարածի տարբերությունը: Եթե Medicare-ի չի հաստատում տվյալ պարագան, Medi-Cal-ը վճարում է ամբողջ արժեքը Medi-Cal-ի սակագնին համաձայն:

**15. Ի՞նչ պետք է ես անեմ, եթե Medi-Cal-ը կամ իմ կառավարվող բուժօգնության ծրագիրը չեն տրամադրում ինձ անհրաժեշտ DME կամ OAP սարքը:**

Դուք կարող եք բողոքարկել: Եթե Դուք դժգոհ եք Medi-Cal-ի գործողությունից, կարող եք պահանջել Medi-Cal-ի անկողմնակալ լուումներ: Եթե Դուք Medi-Cal-ի կառավարվող բուժօգնության ծրագրում եք, կարող եք բողոքարկման հայտ ներկայացնել ծրագրին և պահանջել անկողմնակալ լուումներ, եթե դժգոհ եք որոշումից: Դուք կարող եք պահանջել անկողմնակալ լուումներ առանց բողոքարկման հայտ ներկայացնելու: Եթե Դուք կառավարվող բուժօգնության ծրագրում եք, կարող եք նաև Կալիֆորնիայի Կառավարվող բուժօգնության վարչությունից (California Department of Managed Health Care - DMHC) պահանջել անցկացնել Անկախ բժշկական փորձագիտական քննություն (independent medical review - IMR): Եթե ցանկանում եք պահանջել IMR-ի անցկացում, պետք է ընդհանուր առմամբ սկզբում ներկայացնեք բողոքարկման հայտ կառավարվող բուժօգնության ծրագրին: Մանրամասն տեղեկատվության համար տե՛ս <http://www.dhcs.ca.gov/services/medi-cal/Pages/Medi-CalFairHearing.aspx>: Այս կայքէջը լավ աղբյուր է Ձեր հետազոտությունն սկսելու համար, եթե որոշել եք դիմել Medi-Cal-ի անկողմնակալ լուումներ անցկացնելու համար: Հաջորդ բաժնում քննարկվող նյութերից շատերը նույնպես պարունակում են օգտակար տեղեկատվություն անկողմնակալ լուումների վերաբերյալ: Անկողմնակալ լուումների վերաբերյալ ընդհանուր տեղեկատվության համար այցելեք Սոցիալական ապահովության ծառայությունների վարչության նահանգային լուումների բաժնի կայքէջը՝

<http://www.dss.cahw.net.gov/shd/default.htm> և  
<http://www.dss.cahw.net.gov/shd/PG1094.htm>:

## 16. Որտե՞ղից կարող եմ ստանալ մանրամասն տեղեկատվություն:

Համացանցում առկա է բազմազան տեղեկատվություն Medi-Cal-ի մասին: Մանրամասն տեղեկատվության համար տե՛ս DRC-ի #5511.01, Medi-Cal հրապարակումը. Համացանցում որտեղ գտնել օրենքները, կանոնակարգերը և այլ օգտակար, անվճար տեղեկատվություն (մարտ 2012) այստեղ.

<http://www.disabilityrightsca.org/pubs/PublicationsHealthBenefits.htm>:

Սրանք որոշ այլ համացանցային ռեսուրսներ են.

**Հայտ Medi-Cal-ի համար:** Եթե Դուք ունեք SSI, Դուք ավտոմատ ստանում եք Medi-Cal: Եթե Դուք չունեք Medi-Cal, կարող եք դիմել տարածքային թաղապետարանի սոցիալական ապահովության ծառայությունների վարչությանը կամ առցանց: Medi-Cal-ի հայտերի մասին տեղեկատվություն կարող եք գտնել DHCS-ի կայքէջում՝ <http://www.dhcs.ca.gov/services/medi-cal/pages/applyformedi-cal.aspx>:

**Medi-Cal-ի համապատասխանություն:** Medi-Cal-ի համապատասխանության և ծառայությունների մասին տեղեկատվություն ստանալու լավագույն աղբյուրը NHeLP ձեռնարկն է՝ Medi-Cal ծրագրի նկարագիրը (2008թ.), որը հասանելի է Health Consumer Alliance-ի հետևյալ կայքէջում <http://healthconsumer.org/publications.htm#manuals>: Նույն կայքէջում Health Consumer Alliance-ն ունի այլ օգտակար հրապարակումներ Medi-Cal-ի համապատասխանության և ծառայությունների մասին:

**Medi-Cal-ի մատակարարների ձեռնարկներ:** Medi-Cal-ի մատակարարների ձեռնարկները կարելի է գտնել Medi-Cal-ի մատակարարների հետևյալ կայքէջում՝ [http://files.medi-cal.ca.gov/pubsdoco/Manuals\\_menu.asp](http://files.medi-cal.ca.gov/pubsdoco/Manuals_menu.asp): Երկարատև օգտագործման

բժշկական սարքերի և բժշկական պարագաների (DME) մասին ձեռնարկը կարելի է գտնել “Allied Health” բաժնում: Օրթոպեդիկ և պրոթեզային սարքերի (OAP) մասին ձեռնարկը նույնպես կարելի է գտնել այնտեղ:

Կալիֆորնիայի հաշմանդամների իրավունքներով զբաղվող կազմակերպությունն ունի մի շարք հրապարակումներ Medi-Cal-ի համապատասխանության և ծառայությունների մասին: Դրանք կարելի է գտնել <http://www.disabilityrightsca.org/pubs/PublicationsHealthBenefits.htm> կայքէջում:

*Կալիֆորնիայի հաշմանդամների իրավունքներով զբաղվող կազմակերպությունը ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկը տե՛ս <http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html>:*